ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

8 սեպտեմբերի 2026թ. թիվ 994

Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿՈՒՐԹԱՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Վ.Ղարսայանի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից՝ մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրող Արման Մկրտչյանին ս/թ սեպտեմբերի 8-ին մեկ օրով գործուղել Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայր՝ տուֆ քարով ճանապարհների սալարկման շինարարական աշխատանքները դիտարկելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

9/8/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 8
ք.Վանաձոր